

MASTERFLOW 920 AN (MASTERFLOW 920 SF)

Ունիվերսալ, երկբաղադրիչ, ստիրոլ չպարունակող նյութ՝ անկերների ամրացման համար:

**Բնութագրություն**

MASTERFLOW 920 AN-ը երկբաղադրիչ դարձուցանակ (тиксотропный), մեթակրիլատային հիմքի վրա քիմիական նյութ է: Նախատեսված է քիմիական խարսխավորման (анкеровка) համար: **MASTERFLOW 920 AN**-ի երկու կոմպոնենտն էլ փաթեթավորված են մեկ քարթրիջում առանձին բաժիններով և, նյութը քարթրիջից հանելիս, խառնվում են անհրաժեշտ հարաբերությամբ խառնիչ գլխիկի մեջ (в смесительном законечнике):

Կիրառման ոլորտ

MASTERFLOW 920 AN-ը կարող է օգտագործվել.

- բետոնե կոնստրուկցիաներում արմատուրայի ամրացման համար,
- անկերային բոլտերի, պտուտակների և ամրակցման համակարգերի ամրացման համար,
- միացման արմատուրայի ամրացման համար,
- ցածր ջերմաստիճանում (-5°C -ից ցածր) անկերների և հիմքի դետալների ամրացման համար,
- դարպասների, հանգույցների, անտենաների և այլ տնային հարմարանքների ամրացման համար:

Առավելություններ

- կիրառման մեջ պարզություն,
- բարձր հարակցում (ադիզիա),
- արագ պնդացում,
- միջին և բարձր բեռնվածությունների համար,
- բարձր սկզբնական և վերջնական մեխանիկական ամրություն,

- «թեթև խոնավության» պայմաններում կիրառելի է,
- կարող է կիրառվել ցածր և բարձր ջերմաստիճաններում,
- պատվում է ստանդարտ մոնտաժային ատրճանակի օգնությամբ (280մլ),
- ցածր կծկունություն,
- օգտագործվում է ներսի և դրսի աշխատանքների համար,
- նյութը երաշխավորված է որակի հավաստագրով,
- նյութը չի պարունակում ստիրոլ և սոլվենտ:

Կիրառման ուղեցույց

Մակերևույթի նախապատրաստումը՝ Հիմքը պետք է լինի մաքուր, կառուցվածքայնորեն համասեռ և առանց մասնիկների, որոնք կարող են բացասականորեն ազդել անկերային խառնուրդի հարակցման (ադիզիայի) վրա: Բետոնե հիմքի ամրությունը պետք է բավարար լինի անկերների տեղադրման համար:

Անցքեր՝ Անցքերը կարող են իրականացվել հորատման սարքերով: Անցքերի խորությունն ու տրամագիծը պետք է որոշվեն կախված հիմքից, օգտակար բեռնվածությունից և անկերային բոլտերի ու ամրանի (арматура) տրամագծից: Գայլիկոնացված (высверленные) անցքերը պետք է մաքրվեն կլոր խոզանակների օգնությամբ և յուղորսիչով կոմպրեսորից անմիջապես դուրս եկող սեղմված օդի օգնությամբ կամ օգտագործելով հատուկ ձեռքի պոմպեր: Հիմքը կարող է լինել խոնավ, բայց առանց ջրի առկայության:

Քարթրիջների կիրառումը՝ Խորհուրդ է տրվում քարթրիջները պահել առավել տաք միջավայրում, եթե նյութն օգտագործվելու է սառը պայմաններում, քանի որ ցածր ջերմաստիճանային պայմաններում **MASTERFLOW 920 AN**-ի արտաճզմումը պահանջում է մեծ ջանքեր:

1. Հանել խցափակիչը և քարթրիջի մեջ տեղակայել խառնող հարմարանքը՝ խառնիչ գլխիկը:

2. Քարթրիջը տեղադրել ատրճանակի մեջ մղման համար և սկսել արտաճզմելը:

Խառնուրդի առաջին մի քանի սանտիմետրը չօգտագործել այնքան ժամանակ, մինչև խառնվող

նյութը չլինի համասեռ գույնի: Ընդմիջումների ընթացքում, երկար օգտագործելիս, հանել խառնող հարմարանքը և փակել խցափակիչը:

Բարձր ծավալային կշիռ ունեցող քարերում կիրառումը` MASTERFLOW 920 AN քարթրիջի խառնող հարմարանքը տեղադրել անցքի խորության մեջ և արտաձգմել խառնուրդի բավարար քանակություն` աստիճանաբար հանելով հարմարանքը: Հետևել, որ անցքը լցնելիս օդային պղպջակներ չառաջանան: Տեղադրել անկերային բոլտ կամ ամրան սեղմելով և պտտելով անցքի խորության մեջ: Խառնուրդի ավելցուկները դուրս կգան մակերևույթի վրա: Պահպանել խառնուրդի պնդեցման համար անհրաժեշտ ժամանակը, որը նշված է ստորև բերված աղյուսակում:

Սնամեջ բլոկերում կիրառումը` Ծակել անհրաժեշտ տրամագծի անցք, մաքրել այն վերը նշված ձևով և կիրառման այս տեսակի համար հատուկ մշակված պարկուճ (ռոտեա) տեղադրել: Պարկուճը փակել միջադիրով, նրա միջով տեղադրել խառնող հարմարանքը և արտաձգմել խառնուրդը մինչև տարածության ամբողջովին լցվելը` խուսափելով օդի ներթափանցումից: Տեղադրել անկերային բոլտ` այն պտտելով անցքի խորության մեջ և չժանրաբեռնել մինչև խառնուրդի վերջնական պնդեցումը:

Գործիքների մաքրումը` Խառնուրդի մնացորդները հեռացնում են լուծիչի օգնությամբ:

Տեխնիկական բնութագրեր

- **MASTERFLOW 920 AN** խառնուրդը պնդացած վիճակում կայուն է շատ քիմիական նյութերի նկատմամբ: Քիմիկատների ցուցակը բերված է աղյուսակում:
- Խառնուրդը կարող է կիրառվել -5°C -ից մինչև $+35^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում, բայց քարթրիջները պետք է պահել $+5^{\circ}\text{C}$ կամ բարձր ջերմաստիճանում` ավելի հեշտ արտաձգման համար:

1. Պնդեցման արագություն

Քարթրիջի ջերմաստիճան	Քարթրիջի նվազագույն ջերմաստիճան $+5^{\circ}\text{C}$		$+5^{\circ}\text{C}$ -ից $+10^{\circ}\text{C}$	$+10^{\circ}\text{C}$ -ից $+20^{\circ}\text{C}$	$+20^{\circ}\text{C}$ -ից $+35^{\circ}\text{C}$
Հիմքի ջերմաստիճան	5°C -ից 0°C	0°C -ից $+5^{\circ}\text{C}$	$+5^{\circ}\text{C}$ -ից $+10^{\circ}\text{C}$	$+10^{\circ}\text{C}$ -ից $+20^{\circ}\text{C}$	$+20^{\circ}\text{C}$ -ից $+35^{\circ}\text{C}$
Աշխ. ժամ	15-20 ր		10 ր	4 ր	1.5 ր
Չոր բետոնում պնդեցման ժամանակահատված	5 ժ	2 ժ 30 ր	1 ժ 45 ր	1 ժ 15 ր	45 ր
Խոնավ բետոնում պնդեցման ժամանակահատված	7 ժ 30 ր	3 ժ 45 ր	2 ժ 40 ր	1 ժ 50 ր	1 ժ 10 ր

2. Քիմիական ներգործության նկատմամբ կայունություն

Նյութ	Երկարատև ազդեցություն	Կարճաժամկետ ազդեցություն	Զկիրառել
Ջուր	X		
Աղաջուր	X		
Տաք ջուր	X		
Բենզին	X		
Կերոսին	X		
Գազօլին	X		
Մեթանոլ		X	
Ացետոն		X	
Ուայթ-սպիրիտ		X	
Կաուստիկ սոդա -50%		X	
Աղաթթու (10% 20°C -ի դեպքում)		X	
Ծծմբական թթու (50% 30°C -ի դեպքում)			X
Կիտրոնաթթու		X	

3. Ջերմաստիճանի ներգործություն Աշխատանքային բեռնվածության նվազման գործակից


C° ջերմաստիճան	Նվազման գործակից
-20	1
0	1
20	1
40	1
60	0,9
80	0,7

100	0,5
120	0,4
140	0,3

4. Ծախսը

Անցքի տրամագիծ (մմ)	M8	M10	M12	M16	M20
	10	12	14	18	22
Անցքի խորություն (մմ)	64	80	96	128	160
Ծախս (մլ)	1,8	2,8	3,9	6,8	10,6
Անցքի խորություն (մմ)	96	120	144	192	240
Ծախս (մլ)	2,7	4,1	5,9	10,2	15,8

5. Ամրանի խարսխավորում (анкеровка) BAEL 91 ստանդարտին համապատասխան



d = ամրանի տրամագիծ

d_1 = գայլիկոն / անցքի տրամագիծ

L = խարսխավորման արդյունավետ խորություն

Բնութագրություններ

d (մմ)	Նվազ ամրություն սահմանային բեռնվածության դեպքում (կՆ)	Առաձգականության սահման F_a (կՆ)	Առավելագույն բեռնվածություն $F_a/1,15$ (կՆ)
8	27,7	25,2	21,9
10	43,2	39,3	34,1
12	62,2	56,5	49,1
14	84,7	77,0	66,9
16	110,6	100,5	87,4
20	172,7	157,0	136,5

Աշխատանքային բեռնվածությունները բերված են հետևյալ հավասարումից՝ $L = \beta \cdot (F/d1)$, որտեղ.

L = խորություն (մմ)

F = ձողի վրա առավելագույն հնարավոր բեռնվածություն (կՆ)

d = գայլիկոն / անցքի տրամագիծ (մմ)


β = բետոնի որակի հետ կապված գործակից:

Բետոն	B 20- 25	B 35- 40
β	1,51	1

Նվազագույն և առավելագույն տեղակայման բեռնվածություն

d (մմ)	d_1 (մմ)	Բետոն B 20-25		Բետոն B 35-40	
		L նվազ./առ. (մմ)	F նվազ./առ. (կՆ)	L նվազ./առ. (մմ)	F նվազ./առ. (կՆ)
8	10	80/330	5,3/21,9	80/219	8,0/21,9
10	12	100/429	7,9/34,1	100/284	12,0/34,1
12	16	120/483	12,7/49,1	120/307	19,2/49,1
14	18	140/561	16,7/66,9	140/372	25,2/66,9
16	20	160/680	21,2/87,4	160/437	32,0/87,4
20	25	200/824	33,1/136,5	200/546	50,0/136,5

6. Խարսխավորում (анкеровка) բետոնի մեջ ETAG N°001 ստանդարտին համապատասխան



d = պարուրակային ձողի տրամագիծ

d_0 = գայլիկոն / անցքի տրամագիծ

d_r = անցքի տրամագիծ անկերային պաստառում

h_{ef} = խարսխավորման արդյունավետ խորություն

l_{inst} = երկարաձգման պատող մոմենտ

h_{min} = բետոնի նվազագույն հաստություն

Տեղակայման տվյալներ

Նոմինալ տրամագիծ	d ₀ (մմ)	d (մմ)	h (մմ) Խարսխավորման արդյունավետ խորություն		T (Hm) Չզման մոնետ	h (mm) Բետոնի նվազ. հաստություն	
			8xd	12xd		8xd	12xd
M8	10	9	64	96	10	100	130
M10	12	12	80	120	20	110	150
M12	14	14	96	144	40	130	175
M16	18	16	128	192	80	160	225
M20	22	22	160	240	150	200	280

Բացի բետոնի որակից, անցքերի բացման մաքրությունից՝ խարսխավորման համակարգերի արդյունավետ կիրառման կարևոր սահմանափակող գործոններից է անցքերի դասավորվածությունը ինչպես միմյանց նկատմամբ, այնպես էլ բետոնի եզրի նկատմամբ:

Անցքերի դասավորվածությունը

Նորմալ տրամագիծ d (մմ)	hef (մմ) 8xd		hef (մմ) 12xd	
	S _{min}	C _{min}	S _{min}	C _{min}
M8	35	35	48	48
M10	40	40	60	60
M12	48	48	72	72
M16	64	64	96	96
M20	80	80	120	120

S_{min} = անցքերի միջև նվազագույն հեռավորություն
 C_{min} = եզրի նկատմամբ նվազագույն հեռավորություն

Պոկում և կոնային քայքայում միաձույլ բետոնում B20/25-ից B50/60

	M8	M10	M12	M16	M20
h _{ef} 8xd (մմ)	64	80	96	128	160
Բետոնի կոնային քայքայում (կՆ)	25	30	40	60	75
h _{ef} 12xd (մմ)	96	120	144	192	240
Բետոնի կոնային քայքայում (կՆ)	35	40	60	95	115
Պիմացկունության մասնավոր ցուցանիշ	1.5				

Փաթեթավորում

MASTERFLOW 920 AN խառնուրդը մատակարարվում է քարթրիջներով՝ ստանդարտ մոնտաժային ատրճանակի համար 280մլ-անոց քարթրիջ, հատուկ ատրճանակի համար 380մլ-անոց փափուկ քարթրիջ, հատուկ ատրճանակների համար 825մլ-անոց կողք կողքի համատեղված քարթրիջ:

Պահպանման պայմաններ

Պահել գործարանային փաթեթավորմամբ չոր տարածքում +5°C - +25°C ջերմաստիճանային պայմաններում: